

Խորհրդակցություն՝ զորահավաքային նախապատրաստության հարցերի վերաբերյալ

Ապրիլի 30-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը Գորիսի քաղաքապետարանի նիստերի դահլիճում անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն: Մասնակցում էին Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքային և գյուղական համայնքների, զինկոմիսարիատների և իրավապահ մարմինների ղեկավարներ, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին մարզի զորահավաքային նախապատրաստության պլանով նախատեսված միջոցառումները հավուր պատշաճի կազմակերպելու և ընթացիկ ամսում անցկացվելիք զորավարժություններին վերաբերող հարցեր: Մարզպետը կարևորեց զորավարժություններին մարզի մասնակցությունը և դրանց պատշաճ մակարդակով կազմակերպումը:

Մարզպետ Ս. Խաչատրյանը հանգամանորեն ծանոթացավ կատարված աշխատանքներին, առկա խնդիրներին: Մարզպետը տվեց նաև մի շարք հանձնարարականներ, այդ թվում՝ սեղմ ժամկետում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնելու անհրաժեշտության մասին:

Օգտվելով առիթից՝ համայնքների ղեկավարները բարձրացրեցին իրենց հուզող խնդիրները, անդրադարձան նաև Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի, Շուշիի ազատագրման և Երկրապահի օրվա միջոցառումներին վերաբերող կազմակերպչական հարցերի:

